Կանթեղ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ռազմահայրենասիրքական դաստիարակությունը դպրոցում

Կատարող՝ Անի Պետրոսյան

Խումբ՝ Պատմության

2023թ.

Բովանդակություն

Ներածություն_____2-4

Գլուխ 1 Ընտանիքի դերը ռազմահայրենասիրական գիտելիքների ձեռքբերման գործում. _____4-5

Գլուխ 2 Մանկավարժական դերը ռազմահայրենասիրության ձևավորման գործում _____6-12

Գլուխ 3 Եզրակացություններ_____14-15

Գրականություն _____16

Թե դու հայ ես՝ հայությունդ պիտի հարգես անպատճառ,

Հայաստանը պիտի լինի հուսո աստղ քեզ համար,

Օտարինը դու մի ատիլ, մի էլ սիրիր կուրորեն,

Բայց քո հայի օգուտները միշտ վեր դասի ամենքեն։

Ներածություն

Հայրենասիրական դաստիարակություն երեխաները ստացել են բոլոր ժամանակներում՝ անկախ սեռից ու տարիքից։ Օրինակ Հին Հռոմում թե տղաները, թե աղջիկները յոթ տարեկանից սկսած ստանում էին նպատակաուղղված ռազմահայրենասիրական դաստիարանություն։ Ռուս մանկավարժ Կ. Դ. Ուշինակին գտնում էր <<Ինչպես չկա մարդ առանց ինքնասիրության, այնպես էլ չկա մարդ առանց հայրենասիրության, քանի որ հայրենիքի նկատմամբ ունեցած սերն է բանալի դառնում մարդու իրական դաստիարակության համար՝ պայքարելու նրա բոլոր վատ սովորությունների դեմ>>: Փիլիսոփաների կարծիքով հայրենասիրությունը մարդկային ամենախոր զգացմունքներից մեկն է և չունի կոնկրետ ազգային պատկանելիություն. այն բնորոշ է բոլոր ազգերին և ենթադրում է հայրենիքի նկատմամբ սիրո, նրան ծառայելու, նվիրելու, սեփական ժողովրդի հետաքրքրություններով ապրելու, երկրի պաշտպանության համար քաղաքացիական պարտքի և Սահմանադրական պարտավորությունները կատարելու պատրաստակամության առկայություն։ Հայրենասիրությունն այն անբացատրելի ուժն է, որն անհրաժեշտության դեպքում համախմբում է հասարակության բոլոր շերտերը։

Նեղ իմաստով հայրենասիրությունը կապակցվածությունն է հայրենի վայրերին, մայրենի լեզվին, սեփական ժողովրդի պատմությանը մշակույթին և այլն։ Հայրենիքի նկատմամբ սերը յուրաքանչյուրի մեջ արթնանում է յուրովի տարբեր տարիքում և ունենում դրսևորման տարբեր ձևեր։ Սկզբում դա տեղի է ունենում չգիտակցված, ինքնաբերաբար, և միայն հասուն տարիքում կենսափորձի և գիտելիքների կուտակման արդյունքում մարդը գիտակցում է իր ազգային պատկանելիությունը, իր և հայրենիքի ներդաշնակեցման անհրաժեշտությունը։

Յուրաքանչյուր ոք հայրենասիրությունը հասկանում և մեկնաբանում է յուրովի։ Կարելի է ասել՝ հայրենասիրության վերաբերյալ չկա միանշանակ կարծիք կամ սահմանում։ Իմ կարծիքով՝ իսկական հայրենասիրությունը բնութագրվում է ոչ միայն հայրենիքի նկատմամբ տածած սիրով և նվիրվածության, նրա անցյալի և ներկայի նկատմամբ ունեցած հպարտությամբ, այլև առաջին հերթին հայրենիքի ապագայի համար զգացված պատասխանատվությամբ, նրա կերտման մեջ իր ակտիվ մասնակցությամբ։

ՀՀ քաղաքացիների հայրենասիրական դաստիարակությունը կարևորագույն արժեք է և ազգապահպան, հայրենապաշտպան անգնահատելի նշանակություն ունի։ Այն պետք

է ուղղված լինի հասարակության հոգևոր-բարոյական ամբողջականության հաստատմանը: Մեր պետության զարգացման ողջ ընթացքում ռազմահայրենասիրությունը գրավել է առաջնային տեղ:

Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է երկրի պաշտպանության հետագա ամրապնդմամբ, ազգային բանակի մարտունակության բարձրացմամբ: Բանակ-հասարակություն փոխադարձ կապի ամրապնդման գործում նշանակալի դերակատարում ունեն մեր հանրապետությունում գործող հասարակական և պետական կազմակերպությունները: Իզուր չեն ասում՝<<Այնտեղ որտեղ բանակն ու ժողովուրդը միասնական են, այնտեղ բանակն անպարտելի է>>:

Թեկուզ տարբեր ծանրություն ունեն մեր պարտականությունները, սակայն պատասխանատվության առումով բոլորս հավասար ենք, որովհետև այն առաջին հերթին վերաբերում է հայրենիքի անվտանգությանը[Խոսք Սերյան Օհանյան]:

Աճող սերնդի դաստիարակությունը ընտանիքում և դպրոցում ունի շատ ընդհանուր կողմեր: Ընդհանուրն այն է, որ դաստիարակչական գործընթացը մեթոդաբանական մեկ հիմք ունի: Հայրենասիրական դաստիարանությունը և դպրոցում և ընտանիքում ուղեկցվում է հայրենիքի նկատմամբ սիրո, նվիրվածության ձևավորմամբ, հոգևոր և նյութական արժեքների ճանաչմամբ և գնահատմամբ: Ընտանեկան դաստիարակության առավել արդյունավետ ձևերից կարելի է նշել՝

<u>Ընտանիքի դերը Հայրենասիրական գիտելիքների ձեռքբերման գործում:</u>

Ընտանեկան դաստիարակությունը հայրենասիրական գիտելիքների ձևավորման նախնական աստիճանն է: Ընտանիքներում երեխաների Հայրենասիրական դաստիարակության առավել արդյունավետ ձևերից կարելի է նշել հետևյալները՝

1. Ընտանեկան լուսանկարների, նամակների միջոցով երեխաների մեջ սերմանել սեր առ հայրենիք:
2. Ընտանիքի անդամների հետ կազմակերպել արշավներ, էքսկուրսիաներ, այցելություններ մարտական և փառքի հուշարձաններ, թանգարանների, ցուցահանդեսներ, ռազմական զորահանդեսներ:
3. Ընտանիքի անդամների՝ ծնողների միջամտությունը երեխայի դպրոցական, արտադպրոցական, ռազմահայրենասիրական միջոցառումներին:
4. Ընտանիքում հիմնել Հայրենասիրական ուղղվածության գրադարան, այցելել գեղարվեստական ցուցահանդես, երեխաներին օգնել կազմել հայրենասիրական ցուցահանդեսներ:

Աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության համակարգի հաջորդ օղակը հանրակրթական դպրոցն է:

Դպրոցականների հայրենասիրական դաստիարակության ձևավորման կարևոր նախադրյալները հուշում են, որ յուրաքանչյուր ուսումնական առարկա պետք է պարունակի աշխարհայացքային և բարոյական գաղափարներ: Այդ գործընթացի արդյունավետ իրականացումը պահանջում է աշակերտի անձի <<ես>> ի

կայացումը, ինչը տեղի է ունենում կոլեկտիվ միջավայրում: Կոլեկտիվը հզոր ազդակ է ուսումնական և արտադասարանական աշխատանքի մեջ հաջողության հասնելու գործում: Ինչ խոսք դա այնքան էլ հեշտ չէ: Հարկավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, գործունեության այնպիսի եղանակներ, որոնցում դրսևորվում են անձի էությունը, նրա ձգտումները տեսնել ոչ միայն սեփական անձը, այլև կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի:(Խոսք Սերժ Սարգսյան):

Հայրենասիրությունը ձևավորելն, այն բարձր մակարդակի հասցնելն ու պահպանելը բավականին բարդ ու աշխատատար գործ է:

2. Մանկավարժների դերը Հայրենասիրական դաստիարակության գործում

Հայրենասիրական դաստիարակությունը մանկավարժների մշտական գործունեությունն է ուղղված երիտասարդ քաղաքացիների հայրենասիրական գրտակցության, ազգային արժեքների, հայրենիքի նկատմամբ հավատարմության զգացումը, քաղաքացիական պարտքի ձևավորմանը: Խորհրդային միասնական համակարգից անցնելով ազգային դպրոցի կառուցմանը ՀՀ կրթական նորմատիվ փաստաթղթերում հանրակրթության պետական կրթակարգում, հանրակրթության կազմակերպման սկզբունքների մեջ հստակ ամրագրված է հանրակրթության ազգային արժեքների հենքի վրա իրականացնելու սկզբունքը՝ դրանով իսկ նպաստելով սովորողների մեջ ազգային և համամարդկային արժեքների ձևավորմանը ու ներդաշնակ զարգացմանը: Այս սկզբունքները կարմիր թելի նման անցնում են դպրոցի երեք աստիճաններով՝ կարևոր տեղ զբաղեցնելով յուրաքանչյուր աստիճանի համար սահմանված նպատակների շարքում:

Ճշմարիտ հայրենասիրական դաստիարակումը ենթադրում է անձնային դրական որակները մի ամբողջ համալիրի նպատակաուղղված ձևավորում և հետևողական զարգացում: Այդօրինակ անձնային զարգացման հիմք է հանդիսանում սովորողների հետ դաստիարակչական աշխատանքի հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակույթային բաղկացուցիչը: Ահա թե ինչու հայրենասիրությունը ձևավորվում է հոգևորի, քաղաքացիականության ի անձի սոցիալական ակտիվության միասնության պայմաններում, երբ անձը գիտակցում է հայրենիքի հետ իր կապի անքակտելիությունը:

Հայրենասիրությունն օրգանապես ներառվում է ՀՀ ազգային գաղափարախոսության, 21-րդ դարի կրթական ծրագրերի և բովանդակության մեջ, ընդսմին նրա արժեքային, հոգևոր բարոյական հիմքերը հանդիսանում են ժամանակակից կրթության արդիականացման հայեցակարգային անբաժանելի մասը:

Ինչպես ցույց է տվել պրակտիկան, հայրենական կրթական համակարգի զարգացման արդի փուլում կարևոր ոլորտներից մեկը, որը թույլ է տալիս մանկավարժներին, դաստիրկներին ավելի արդյունավետությամբ և հաջողությամբ իրականացնել սովորող երիտասարդության հայրենասիրական

դաստիարակության ծրագրերը, սովորողների հետ արտադասարանական և արտաուսումնական աշխատանքները։

Այսօր ՀՀ-ի համար չկա առավել կարևոր գաղափար, քան հայեցի հայրենասիրական դաստիարակությունը, քանի որ առանց վերջինիս չի կարող տեղի ունենալ անձի հոգևոր և քաղաքական կայացումը։ Առանց հայի հայրենասիրական դաստիարակության չի կարող տեղի ունենալ գիտակցական պատասխանատու և նվիրված ՀՀ քաղաքացու ձևավորումը։ Ահա թե ինչու ներկա փուլում հասարակական զարգացման ամենահրատապ խնդիրներից մեկը համարվում է սովորողների հայրենասիրական դաստիարակության կազմակերպման նկատմամբ հայեցակարգային և գործնական իրականացման համար առավել արդյունավետ մեթոդների և եղանակների ձևավորումը։

Աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունը ժամանակակից հայ հասարակության զարգացման գործում գլխավոր խնդիրներից մեկն է։ Դպրոցականների կենսական ինքնորոշումը երբեք հեշտ գործ չի եղել, իսկ ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններում այն առավել քան բարդացել է։

Ակնհայտ է, որ ժամանակակից հայ հասարակության որպես սոցիալական հիմսախնդիրների լուծման չափանիշներ պետք է հանդես գան հոգևոր բարոյական արժեքները՝ սերը հայրենիքի, սեփական ժողովրդի հանդեպ, մարդու ստեղծագործ գործունեության արժեքի գիտակցում՝ իր բոլոր դրսևորումներով։ Այս առումով որպես ուսումնական հաստատությունների կարևորագույն գործառույթներից մեկը հանդես է գալիս արժեքային կողմնորոշումների ձևավորումը ՝ բարոյական որակների զարգացման հետ մեկտեղ։

Այսօրվա ուսանողի մոտ ռազմահայրենասիրություն ձևավորելու և զարգացնելու գործում կարևորագույն դերակատարում ունի Արցախի ազատագրական պայքարի ուսումնասիրությունն ու ճիշտ ազգային արժեհամակարգի ձևավորում։

Ռազմահայևենասիրական դաստիարակությունը ու ուսուցումը սկսվում է հայրենասիրության մասին կայունության ճշմարիտ պատկերացման ձևավորմամբ։

Դասի ընթացքում կարելի է կատարել պրիզմա վարժությունը օգտագործելով <<հայրենասիրություն>> սկզբնաբառը։


Հայրենասիրություն
հող
Ծննդավայր
մշակ
դաշտ
հայր
մայր
միրգ
գետակ
տարածություն
անսահմանություն
տուն
օջախ
սեր
ջերմություն
բնություն
անդորրություն
գերդաստան
հանգստություն
ազատություն
ընտանիք

Աշակերտների հայրենասիրական դաստիարակության անհրաժեշտությունը հայոց պատմություն առարկայից։ Անձի ձևավորման համար բացառիկ կարևորը հենց կրթական ոլորտն է առավել նպաստավոր անձի բարոյական որակների բացահայտման համար։ Այստեղ հարկ է առանձնացնել երեխաներին կրթություն տվող ուսումնական հաստատությունների, ինպես նաև մանկավարժական կադրերի դերը։(1 էջ 308,2 էջ 407)։

Կրթական գործունեության պրակտիկայում օգտագործվում են աճող սերնդի հետ հայրենասիրական դաստիարակության աշխատանքների տարբեր ուղղություններով և ձևերով և՝ ռազմահայրենասիրական դաստիարակություն, հերոսական-հայրենասիրական դաստիարակություն, քաղաքացիական-հայրենասիրական դաստիարակություն պատմական-հայրենասիրական դաստիարակություն մշակութային-հայրենասիրական դաստիարակություն և կրթադաստիարակչական այլ ոլորտներ։

Կրթության ժամանակակից համակարգում կրթության ձևավորման առավել բարենպաստ պայմաններ են առկա սովորողների լրացուցիչ կրթության հաստատություններում, քանի ոչ վերջիններս չեն սահմանափակվում կրթական ստանդարտներով, ուղղորդված են դեպի անձի անհատական տվյալները, երեխայի հետաքրքրություններն ու կարողությունները, սովորողների համար ապահովում են ինքնորոշման և ինքնորոշման մեծ հնարավորություններ։ Լրացուցիչ կրթությունը կազմակերպվում է ազատ ընտրության սկզբունքի հիման վրա։ Այն կարող է աստիճանաբար, առանց ձանձրույթ պատճառելու և առավելագույն արդյունավետությամբ երեխայի կամ դեռահասների մեջ Ձևավորել այնպիսի որակներ, ինչպիսիք են՝պատասխանատվությունը աշխատասիրությունը, ինքնակազմակերպումը, հարգալից վերաբերմունքի դրսևորումը, ընկերասիրությունը և այլն։

Գոյություն ունի այն ուղղությունների մեծ կազմակերպություններ, որոնցով աշխատում են երեխաների լրացուցիչ կրթության հաստատությունների մանկավարժները։Դպրոցական անձի քաղաքացիական-հայրենասիրական որակներով ձևավորումը միտված ուղղությունների շարքում կարելի է առանձնացնել հետևյալը՝

Գեղարվեստական-գեղագիտական

Մշակութաբանական

Գիտա-տեխնիկական

Բնապահպանական-կենսաբանական

Մարզա-առողջարարական

Զբոսաշրջքյին-գավառական

Հերոսական-հայրենասիրական

Ռազմա-հայրենասիրական

Ազգային-հայրենասիրական

Ամենաարդյունավետը իհարկե ռազմագայրենասիրկանն է: Անշուշտ մյուս ուղղությունները ևս ոչ նվազ հետաքրքիր են և արդյունավետ:

Հայրենասիրական դաստիարակությունը անշուշտ պահանջում է սեփական ժողովրդի սովորույթների և ավանդույթների վերաբերյալ լրջագույն իմացություն:Ժողովրդական արվեստը սովորողներին զիջում է հենց այդպիսի իմացությամբ և գիտելիքներով: Եվ դա հատկապես կարևոր է մեր օրերում, երբ այլ երկրների ժողովուրդների զանգվածային մշակույթը տարածվում է հաղորդակցության և տեղեկատվության ժամանակակից միջողներով՝ազդելու երեխայի աշխարհայացքի և գեղագիտական ճաշակի վրա, ընդ որում հաճախ ոչ բարենպաստ ձևով:

Ժողովրդական արվեստի ստեղծագործությունների դաստիարակչական ներգործությունը երեխայի վրա հատկապես ուժեղանում է, երբ նա ոչ միայն լսում, այլ նաև գործնականում առնչվում էայդ ստեղծագործությունների նմուշներին:

Ժողովրդական մշակույթի հետ երեխաների հաղորդակցման մեջ առանձնանում են Ժողովրդական տոները ինչպես օրացույցային, այլև եկեղեցական:Այդ տոների ծիսակատարությունների մեջ կուտակված են բյուրեղյա Ժողովրդական իմաստություններ:(3,էջ 335):

Հայրենասերներ և երկրի համար արժանի քաղաքացիներ դաստիարակելու համար անհրաժեշտ է երեխայի մեջ արթնացնել և զարգացնել հպարտության զարգացում, Դաստիարակել հարգանք ու սեր դեպի սեփական ժողովուրդը, նրա անցյալի ու ներկան,նրա պատմության, մշակույթի և ազգային ավանդույթների վերաբերյալ :

Անկասկած է, որ սեփական ժողովրդի հանդեպ սերն ու նվիրվածությունը նպաստում են նաև հարգանք այծ ժողովուրդների հանդեպ:Հետևաբար հայրենասիրական դաստիարակությունը մեծ հաշվով մարդասիրական դաստիարակություն է:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով:

Կարմիր՝ ուսումնադաստիարակչական համակարգ

Կապույը՝ նախնական զինվորական պատրաստակամություն

Կանաչ՝ֆիզիկական պատրաստություն:


Кв. 1
Кв. 2
Кв. 3
Кв. 4

Այսինքն աշակերտի ռազմահայրենասիրական դաստիարակության համար չկա դպրոցում ամենակարևոր առարկա նա որպես հայրենյաց պաշտպան ձևավորված է բոլոր առարկաների ուսուցման արդյունքում: Ազգային գաղափարներով տոգորված ինքնավստահ և անպարտելի սերունդ դաստիարակելու համար կարևոր է ազգային ինքնաճանաչողությունը և հայրենապաշտությունը: Հայրենիքին ու ազգին անմնացորդ ծառայելու գաղափարը պետք է լինի երեխաների դաստիարակության արժեհամակարգի առանցքը:

Հայրենասիրության քաղաքացիական որակների ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողնում արիության ոգեկոչում դասերը: Օրինակ վերջերս ես տեսական անցկացրեց ՀՀ ։ Հանրապետության 100 ամյակը թեմայով, որում անդրադարձան առաջին հանրապետության հերոսներին ու հիմնադիրներից, որը վստահ եմ մեծ դրական նշանակություն կունենա երեխաների ռազմահայրենասիրական դաստիարակության գործին: Այս առումով կարևոր է հայրենիքի պաշտպանի գործը սկսեմ դպրոցում պատանի Երկրապահ ջոկատների ստեղծումից, քանի որ ինչպես Նժդեհի է ասում. Հայրենիքին ապրում են հայրենասիրության, կործանվում նրա պակասից(4 էջ72)**:** Դպրոցում երեխաների ուսումնադաստիարակչական գործում գիտելիքների ձեռքբերման արգելքներ հաղթահարման, վճռական գործողությունների ու նորմացույցերի ուսուցման ընթացքում մենք կիրառում ենք այսպես կոչված <<Վահագն>> համակարգը:

Վ.վարպետություն Ա.անձնուրացություն , Հ. հանդգնություն, Ա.արագություն, Գ. գերազանցություն, Ն. նպատակասլացություն: Գերազանցել նշանակում է գերազանցել մրցակցին, գերազանցել իր նախորդների և գերազանցել ինքն իրեն(5)**:**

Դպրոցականների մեջ հայրենիքի նկատմամբ գիտակցական վերաբերմունք ձևավորվում է ազգամիջյան հարաբերությունների ուսումնասիրման ժամանակ: Անձի ձևավորման, զարգացման վրա ազդող կարևոր գործոններն են գենը և միջավայրը: Մենք զբաղեցնում ենք այնպիսի աշխարհագրական տարածք ուր կան թշնամի պետություններ, պարտավորված ենք աշակերտներին հենց դպրոցում գաղափար տալ իր հակառակորդի, նրա դեմ պայքարի միջոցների մասին, որպեսզի աշակերտը գիտակցի, որ հենց ինքն է իր հայրենի պաշտպանը:, որը ոչ միայն պարտականության է այլ նաև մասնագիտություն է, Ազգը պահող ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերնդեսերունդ փոխանցողը ընտանիքն է: Ազգերի զորությունը ընտանիքների մեջ է: Ընտանիքի և դպրոցի դաստիարակության հիմքում ընկած է ծնողի , մանկավաժ ուսուցանող օրինակը: Կարևոր է դպրոցի և ընտանիքի միասնական պահանջների սահմանումն ու պահպանումը ծնողների հետևողական լինելը, երեխաների հաջող ուսուցմանն ու դաստիարակությանը նպաստող համատեղ որոշումների ընդունումը, անհրաժեշտության դեպքում ծնողներին պրակտիկ Մանկավարժական օգնություն ցույց տալը, երեխայի զարգացման ընթացքի վերաբերյալ փոխադարձաբար սիստեմատիկ տեղեկություն տալը: Երեխաների դաստիարակությունը բարելավելու նպատակով `հասարակության հետ կապեր սահմանելուն օժանդակությունը, դպրոցում ու նրանից դուրս աշակերտների հետ

արտադասարանային, արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծնողների ներգրավումը։

Կարևոր է հայ առաքելական եկեղեցու և Զինված Ուժերի սպայակազմի կողմից համատեղ սեմինարների կազմակերպումը դպրոցներում՝ ծնողների համար։Պատմության քառուղիներում հայի տառապանքը հայապաշպանություն ու հաղթությունը միացած նախապատրաստել են նոր հայի ծնունդը։ Տիտանական ցավից ծնունդ առած անկախության, ազատության սերունդը պետք է պահպանի ու պաշտպանի ազատ,անկախ Հայաստանը մեծ ուխտի միջոցով, մեծ ուխտի առջև խոնարհվելով։

Դաստիարակության տարբեր ձևերի հիմքում պետք է լինի անձի ազգային _պետական ինքնագիտակցության ձևավորմը։

Արտաքին մարտահրավերներին դիմագրավելու համար մեր զենքը պետք է լինի ժամանակակից գիտելիքը, գաղափարական պատրաստությունը,խելացի դիվանագիտությունը,ազգային համախմբվածությունը,դպրոցներին առաջնորդենք<<հայկական ոգի,համախտանիշ գիտելիքներ, միջազգային փորձ>> սկզբունքով։Հասարակական ակտիվության,որպես աշակերտի անձի հատկությամբ դաստիարակության վճռական պայմաններ կարելի է համարել այն գործունեության գաղափարական ուղղվածությունը,որը կատարում են աշակերտները ուսումական, արտադասարանական,արտադպրոցական,աշխատանքներում։Մանկավարժական պետք է ուղղորդի աշակերտի ակտիվ կենսադիրքի որոշման զարգացումը կոլեկտիվում՝միասնական,ամբողջական,անընդհատ կազմակերպչական գիտելիքներով ու կարողություններով զիջելով նրանց, ամուր պահելով ընտանիք,եկեղեցի,դպրոց,բուհ,բանակ կապը,քանզի շղթայի այս օղակներիամրություններից է կախված մեր հասարակության և Հայաստանի ներկան ու ապագան։

Ես վստահ եմ,որ մենք ճիշտ աշխատելով,ու շատ ավելի կրթելու կկարողանա 21_րդ դարում կրթել ու Դաստիարակել ավելի լավ սերունդ,հայի մի տեսակ,որը հասնելու է առավելագույնին՝ստեղծելով հզոր, անկախ,անպարտելի Հայաստան։

Եզրակացություն

Աշխարհաքաղաքական ժամանակակից զարգացումների ֆոնի, էթնիկական ու կրոնական միջազգային ահաբեկչության սպառնալիքների պայմաններում առաջնային դերակատարում է ստանձնում ռազմահայրենասիրությունը: Որպես արժեք այն բազմաբովանդակէ: Հասկանալով հայրենասիրության էությունն ու բնույթը, ըստ այդմ, կկարողանանք մեկնաբանել ռազմահայրենասիրական դաստիարակության նշանակությունը: Անժխտելի է, որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժան բաղադրիչը:

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները `պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր և նյութական մշակույթով,աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված:

- Ռազմահայրենասիրություն ձևավորվում և զարգանում է, որպես հոգևոր բարոյականի հաստատմամբ առավել սոցիալիզացված զգացմունք:
- Ռազմահայրենասիրությունը որպես իր բնույթով խորապես սոցիալական երևույթ, իրենից ներկայացնում է ոչ միայն հասարակական կյանքի որոշակի կողմ, այլև դրա գոյություն և զարգացման էական աղբյուր:
- Հայրենասիրության առաջնահերթ սուբյեկտ է հանդիսանում անհատը, ում գերակա սոցիալբարոյական խնդիրն է իր Հայրենիքին, պատմական, մշակութային, ազգային և հոգևոր պատկանելության գիտակցումը՝ որպես կյանքի իմաստն ու բովանդակությունը որոշող բարձրագույն սկզբունք:
- Ռազմահայրենասիրության իմաստը դրա հոգևոր արժեքայնության մեջ է: Այն որպես վեհ զգացմունք, անփոխարինելի արժեք է, անսպառ աղբյուր:

Ինձնից է կախված իմ ազգի և պետության ապագան: Հայրենիքը միայն հողն ու ջուրը չի, որ արժանի է և ենթակա պաշտպանության նրա զավակների կողմից:Հայրենիքը նաև մի մեծ տուն է, ընտանիք, որի հետ մարդը պետք է աշխատի և որին ծաղկեցնի, ղեկավարի և դարձնի բարեկեցիկ ու արժանավայել ապրելու տեղ: Հայրենիքը պետք է լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր անձի համար պետք է պատիվ լինի:

Հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրում, այն որպես բարձրագույն արժեք դարձնելու գործում կարևոր են նաև ռազմահայրենասիրականմիջոցատումների կազմակերպումն ու իրականացումը:

Զարգացման ծրագրերի այս հատվածում արտացոլված միջոցառումները նպատակաուղղված են՝

- Սովորողների հետ կատարելագործել իրենց աշխատանքի, ազգի, նրա ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանքի հպարտության զգացում:
- Նպաստել հոգեպես հարուստ և սոցիալական ակտիվ կեցվածքով հայ քաղաքացու ձևավորմանը:

- Պահպանել և տարածել ՀՀ պետական խորհրդանիշների բովանդակությունն ու նշանակությունը ՝ սկսելով այս գործընթացը տարրական դպրոցից։ Յուրաքանչյուր աշակերտի պետք է իմանա օրհներգը։
- Բարձրացնելու աշակերտների ազգային շահերի պաշտպանության ձևավորմանը նպատակաուղղված ռազմահայրենասիրական դաստիարակությունը ՝ միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի նկատմամբ։

Գրականություն

1. Пономарева Н. А. <<Потреотическое воспитание школьников
2. Անդրեասյան Հ. Պ. Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում: Երևան 1982թ.
3. Այցվազյան Ա. Մ. Հիմնատարրեր ազգային անվտանգության հայեցակարգի, 1-ին մաս: Երևան 2004
4. Ամիրջանյան Յու. Ա. Սահակյան <<ուսումնական ձեռնարկ>> 2004
5. Буйлова Л. Н. << Актуальные проблемы активизации патриотического воспитания в системе дополнительного оброзования детей>>
6. Ս. Գ. Կովալյով, Ա. Ա. Ստեփանով, Ս. Ն. Շաբալին << Հոգեբանություն>>
7. Գարեգին Նժդեհ <<Հավատամք>> հրատարակություն <<Հայ դատի>> Երևան 1991